Բասեն

Բասեն բնակավայրի վարչական տարածքը կազմում է 4587.46 հա, բնակչությունը 1722 մարդ: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի փեշերին, մեղմաթեք սարալանջին՝ ծովի մակարդակից 1645 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 15 կմ: Բնական լանդշաֆտները սնահողային լեռնատափաստաններ են: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Ունի դպրոց, մանկապարտեզ: Մշակութային հաստատություններ - մշակույթի տուն (չի գործում): Մարզական հաստատություններ մարզադահլիճ: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է: Ունի կիսակառույց եկեղեցի: